ԵՐԳԻԾԱՆՔԸ ԵՎ ՀՈՒՄՈՐԸ ՈՐՊԵՍ ՄԱՏԱՂ ՍԵՐՆԴԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՄԻՋՈՑ

ՄԵԼԻՆԵ ԳԻԼԱՎՅԱՆ

Բանալի բառեր – երգիծանք, հումոր, կատակ, հեգնանք, ծիծաղաշարժ, համեմատություն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակի շարժմանը զուգընթաց փոխվում են մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության խնդիրները, փոխում են նաև երեխաների աշխարհընկալումը, իրականության մեջ տեղի ունեցող դեպքերի, իրադարձությունների նկատմամբ վերաբերմունքը: Ընդլայնվում են նրա հետաքրքրությունների շրջանակները, հեռահաղորդակցման ժամանակակից միջոցները նրանց առջև բացում է նոր հորիզոններ: Հատուկ ուշադրություն է հատկացվում, որ երեխան ոչ միայն լսի ու սովորի, այլև ակտիվորեն մասնակցի դասապրոցեսին, կարողանա իր գիտելիքներ օգտագործել պրակտիկայում, ունենա սեփական կարծիք և այն պաշտպանելու նախանձախնդրություն, հանգի ինքնուրույն եզրակացությունների:

Անտարակույս է, որ մանկապատանեկան գրականությունը մատաղ սերնդի դաստիարակության ամենակրևոր միջոցներից մեկն է և փորձում է քայլել ժամանակին համընթաց, գեղարվեստական միջոցներով երեխաներին ներկայացնել աշխարհը՝ իր բազմաթիվ գաղտնիքիներով:

Անտարակույս է նաև, որ երգիծանքն ու հումորը մեծապես կարող են նպաստել երեխայի մտավոր զարգացմանը: Դրանց ուսուցման ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել, որ մանուկ ու պատանի ընթերցողները շատ զգայուն են գեղարվեստական խոսքի նկատմամբ, և ոչ տեղին օգտագործված մի բառ, մի նախադասություն, մի համեմատություն կարող է վիրավորել նրանց ինքնասիրությունը:

Սույն հոդվածի նպատակն է բացահայտել՝

1. Երգիծանքի և հումորի կարևոր դերը մանուկ և պատանի ընթերցողի դաստիարակության գործում:
2. Դրանց նշանակությունը բնավորության որոշակի գծերի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը:
3. Հետագա ողջ կյանքի համար անհրաժեշտ եզրահանգումներ անելու անհրաժեշտությունը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Թեմայի ուսումնասիրության ընթացքում կիրառել ենք գեղարվեստական ստեղծագործության արժևորման մի շարք մեթոդներ՝ քննական, վերծուծական, համեմատական: Մեծապես օգտվել ենք հայ և այլազգի գրականագետների (Ս. Սարինյան, Էդ. Ջրբաշյան, Ս. Աղաբաբյան, Յու Բորև) ուսումնասիրություններից:

Մանկապատանեկան գրականությունը, որը դեռևս համակարգված ուսումնասիրության չի արժանացել, ընդհանուր գրականության անբաժանելի մասերից մեկն է, ինչին տարօրինակ թերահավատությամբ են մոտենում նույնիսկ մեր անվանի գրականագետներից շատերը:

Այս համապատկերում, բնականաբար, անուշադրության են մատնված նաև երգիծանքն ու հումորը մանկապատանեկան գրականության մեջ: Կարծում ենք՝ թեմայի ուսումնասիրությունը նորագույն շրջանի մանկապատանեկան պոեզիայի համապատկերում կարող է հիմք հանդիսանալ տեսական ընդհանրացումների և նախադեպ՝ գրականության այս ոլորտի վրա ուշադրություն սևեռելու համար:

Երգիծանքը և հումորը տարբեր գրականագետների, փիլիսոփաների, լեզվաբանների, հոգեբանների կողմից բնութագրվել են որպես «իրականության երգիծական պատկերման ձևերից մեկը, ներողամիտ ծաղր մարդկային բացասական գծերի դրսևորումների նկատմամբ», «մարդկանց, իրերի կամ հանգամանքների արժեքը կամ հնարավորությունը մեղմ ծաղրով կամ հեգնանքով ներկայացնելու, մարդկանց մոտ խինդի և ուրախության զգացմունքի առաջացման միջոց», «գերազանցության նշան՝ իրողությունների համեմատության համապատկերում», նույնիսկ՝ «որպես «բուժիչ բալասան»[1]:

Նորագույն շրջանի հայ մանկագիր բանաստեղծների երգիծական և հումորային ստեղծագործությունները գաղափարագեղագիտական առանցքների շուրջ խմբավորելու դեպքում կունենանք հետևյալ պատկերը՝

1. Ծուլությունը երգիծանքվ և հումորով ներկայացնելու ստեղծագործություններ և դրանց նկատմամբ որոշակի վերաբերմունք ձևավորելու միտումներ:

2. Վախկոտությունը քննադատող ստեղծագործություններ:

---

[1] Ավելի մանրամասն տե՛ս Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., «Հայաստան» հրատ., 1976, Ժամանակակից հայերենի բացատրական բառարան, Եր., ՀՍՍՀ ԳԱԱ հրատ., 1976, Բորև Յու., Գեղագիտություն, Եր., «Հայաստան» հրատ., 1982, Ջրբաշյան Էդ., Գրականության տեսություն, Եր., ԵՊՀ հրատ., 1986, Աճեմյան Գ., Մահարու հումորը., Եր., 2004:

3. Մեծամտությունը քննադատող ստեղծագործություններ:

4. Կախվածությունը քննադատող և ազատությունը դրան հակադրող ստեղծագործություններ:

Անբան ճպուռի և ժրաջան մեղվի հակադրության միջոցով Պ. Խաչատրյանը որոշակի վերաբերմունք է մշակում ծուլության ու աշխատասիրության հանդեպ: Մրջյունը նորոգում է իր հին տունը, նոր կառույցներ է ավելացնում, որովհետև ցանկանում է ամուսնանալ ու երեխաներ ունենալ, ինչը շատ տարօրինակ է թվում անբան ճպուռին, որը՝

Աջ խմում էր, ձախ լափում
Թրիվ գալիս ծովափում
Ու պարում էր շատ հանգիստ
Էլ վերվերի, էլ թվիստ:

Ճպուռը գերադասում է մուրացկանությամբ հոգալ իր օրվա ապրուստը՝ «Հաց էր մուրում դռնեդուռ», ուզում էր «թեկուզ ծեր և անուժ» ապրել, որովհետև «կյանքը թանկ է ու անուշ» («Բարի արև» Եր., 1989, 15, 19-20):

Մարդկային բնավորության արատավոր գծերը բանաստեղծները հաճախ վերագրում են կենդանիներին ու թռչուններին, ծառերին ու թփերին, լեռներին ու գետերին: Կենդանական աշխարհը երեխաների համար «բազմաթիվ գաղտնիքներով, առեղծվածներով ու հեքիաթներով լեցուն մի աշխարհ է… և կենդանիներին օժտելով մարդուն բնորոշ հատկանիշներով՝ բանասատեղծները մարդկային արատավոր գծեր են վեր հանում և դրանց նկատմամբ որոշակի վերաբերմունք ձևավորում երեխային մոտ»[21]: Ամեն ձմեռնամուտի ծիծեռնակները տաք երկրներ են չվում, իսկ ճնճղուկները մնում են իրենց բնավայրերում՝ հարուցելով չվող թռչունների հեգնանքն ու ծիծաղը:

Ժայռը հեգնում է մեղվին, ճիշտ ապրելու դասեր է տալիս, կենդանիները ծաղրում են քոթոթին («Ախր քոթոթ չէ, անբան է, անբան»), իշուկին («Էշ է էլի, այ մի հոգի, որ չտաս էլ չի բողոքի») (Պ. Խաչատրյան «Իմ աստղերը», Եր., 1984):

Երեխան «սիրում է կենդանիներին և նրանց ցանկանում է տեսնել իր միջավայրում, իր նմանների շրջապատում: Երեխան ցանկանում է առյուծին առյուծ տեսնել, վագրին՝ վագր, արծվին՝ արծիվ՝ ճախրանքի մեջ, հպարտ, տիրական, ու ցավում է, երբ վանդակում են նրանց, դարձնում

[1] **Գիլավյան Մ.,** Նորագույն շրջանի հայ մանկական պոեզիայի առաջընթացի միտումներ, Եր., 2000, էջ 44:

ձեռնասուն, սպանում նրա ազատությունը: Վանդակում բանտարկված վագրը հարմարվում է իր նոր տանը, այլևս չի մռնչում կատաղած»[1]:

Հարմարվողականությունը քննադատող հրաշալի նվեր է Պ. Խաչատրյանը նվիրում երեխաներին՝ պատահաբար վանդակից դուրս եկած վագրի կերպարով. «Բայց մի անգամ ինչ տեսավ//Դուռը բաց էր կրնկին…// դուրս եկավ նա ծուլորեն// Ու լուռ հենվեց վանդակին:// Հետո նորից մտավ ներս// Ու տարածեց ոտքերը…// Միջից վագրը փախել էր//, Մնացել էր ստվերը…//» (Պ. Խաչատրյան Բարի արև, էջ 49):

Վանդակից դուրս իրեն չի պատկերացնում նաև թութակը, մնացած թռչունների պես չի ցանկանում ազատ թևածել կապույտ երկնքում: Երեխան ցանկանում է բացել վանդակի դռնակը, բայց ինչպես Պ. Խաչատրյանի բանաստեղծության վագրը, թութակը նույնպես վանդակից դուրս գալու փորձ չի անում. Ինչու՞. երեխային մատչելի եղանակով պարզաբանում է բանաստեղծ Ա. Մարտիրոսյանը.

Բացում եմ վանդակը, որ թռչի,
Գնում է անկյունում ննջելու
Եվ տխուր նայում է ու ասում.
-Վանդակում ծնվել եմ,
Վանդակում սնվել եմ,
Երկնքում ինձ պահող
Թռիչքի թևերն են պակասում:
(Մարտիրոսյան Ա., Հեքիաթասաց սունկը, Եր., 1988, էջ 41-42)

Երգիծական և հումորային ստեղծագործություններով հարուստ են բանաստեղծ, արձակագիր Էդ. Միլիտոնյանի ժողովածուները («Երեք խնձոր», «Կենաց ծառ» (1987), «Բադի լամբադան», «Վահագն վիշապաքաղի արկածները» (2008), «Սատանի կամուրջ» և այլն): Էդ. Միլիտոնյանի բանաստեղծություններից շատերը շաղախված են մեղմ հումորով, իսկ արձակ ստեղծագործություններում հերոսներից շատերը օժտված են իրականությունը տեսնելու նրա տարբեր դրսևորումներով և ընթերցողին տրամադրելու «բուժիչ ծիծաղի»: Այծը ծաղրում է «օտար» լեզվով խոսող կենդանիներին, զարմանում է, հեգնում, որ նրանք խոսում են ինչ լեզվով ասես, մոռանալով մայրենին՝ «այծերենը». «Էս ինչ լեզվով եք իրար հետ խոսում՝// Էլ աղվեսերեն, էլ առյուծերեն,// Թե այծ եք, ախպեր խոսեք այծերեն»:

[1] Նույն տեղում, էջ 32:

Երգիծական բովանդակություն ունեն Յու. Սահակյանի շուտասելուկներն ու բառախաղերը, որոնց մեջ հեղինակը որոշակի վերաբերմունք է մշակում շատակերության, շատախոսության, տգիտության վերաբերյալ: Բերենք մի քանի օրինակներ, որոնք օգտագործել ենք մեր նշված մենագրության մեջ. «Ես գիտեմ մի շատակեր,// Այնքան գեր է, այնքան գեր,// Մեկն էլ չկա, որ ասի՝// Օրումեջ կեր, այ ընկեր», «Մեկը շատ է հասկանում,// Մեկն էլ շատ է հաստանում,// Հաստացողը չի հասկանում,// Հասկացողն էլ չի հաստանում», «Մեր դռանը մեծ գերան,// Գերանին յոթ բացբերան,// Հերթ չեն տալիս, որ ես էլ// Խոսեմ գոնե կես բերան»:

Ծիծաղը «բուժիչ բալասան» է և երեխայի համար օրը գեղեցիկ և աշխարհը սիրելի է դառնում, երբ՝

Ծիծաղում է քամին, ծիծաղում է կատուն,
Եվ առվակը ուրախ և, մկնիկը կապույտ,
Եվ գույները բազում, և ձայները զուլալ,
Որովհետև պայծառ
Ու լավ օր է այսօր:
(Սահակյան Յու., «Աքլորակռիվ», էջ 25:)

Ընդհանրացնենք՝ Մանկապատանեկան գրականության մեջ երգիծանքն ու հումորը նպաստում են, որ երեխան որոշակի վերաբերմունք դրսևորի մարդկային բնավորության արատավոր գծերի նկատմամբ: Ի տարբերություն այսպես կոչված. «մեծական» գրականության, որտեղ երգիծանքը հաճախ դրսևորվում է որպես սարկազմ, վերածվում է սուր խայթոցների, մանկապատանեկան գրականության մեջ այն ընդգծված կերպով մեղմ է ու հետապնդում է ոչ թե արատները վեր հանելով մարդուն բացասելու, այլ դրանք վերացնելու ազնիվ նպատակներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Երգիծանքը և հումորը որպես մատաղ սերնդի դաստիարակության կարևոր միջոց» թեմայի ուսումնասիրության արդյունքում կարելի է անել հետևյալ եզրահանգումները՝

1. Մատաղ սերնդի դաստիարակության գործում, ի թիվս տարբեր ժանրերով գրված ստեղծագործությունների, կարևոր է նաև երգիծանքի և հումորի դերը:

2. Երգիծանքի և հումորի միջոցով մանուկ և պատանի ընթերցողների մոտ որոշակի վերաբերմունք է ձևավորվում մարդկային բնավորությունների արատավոր կողմերի նկատմամբ:

3. Հաճախ հումորով ասված խոսքն ավելի դիպուկ ու նպատակային է, քան մարդկային արատները (իհարկե, ոչ ֆիզիկական) բացահայտող ու քննադատական վերաբերմունք ձևավորող որոշակի խոսքը:

4. Այս ամենի համապատկերում կարևոր է, թե մանկագիր գրողն ինչպե՞ս է ներկայացնում մարդկային բնավորությունների արատավոր կողմերը. ծաղրու՞մ է, ասենք, նրանց ծուլության, շատակերության, վախկոտության, ստախոսության և մի շարք արատավոր գծերի համար, թե՞ ուշադրություն է հրավիրում դրանց վրա՝ առանց երեխայի համար ձանձրալի խորհուրդների ու խրատների:

5. Հատկանշական է, որ շարունակելով հայ դասական մանկագրության՝ Ղ. Աղայանի, Հովհ. Թումանյանի ավանդույթները, նորագույն շրջանի բանաստեղծներն անպայման հաշվի են առնում ընթերցողի տարիքային ու հոգեբանական առանձնահատկությունները, ոչ թե հուշում են թե ի՞նչ և ինչպես կարելի է անել կամ չանել, այլ մտերմիկ զրուցում են երեխայի հետ ամենատարբեր հարցերի շուրջ, պատասխանում նրա բազմաթիվ «ինչու՞»-ներին և «ինչպես»-ներին:

Երգիծանքն ու հումորն, այսպիսով, նպաստում են, որ երեխան կարողանա տարբերակել օրինակելին ու արատավորը և որոշակի կարծիք ունենա դրանց նկատմամբ:

Мелине Гилавян, Сатира и юмор как важное средство воспитания молодого поколения - В результате исследования темы «Сатира и юмор как важное средство воспитания подрастающего поколения» можно сделать следующие выводы:

В воспитании подрастающего поколения в произведениях разных жанров важная роль отводится сатире и юмору.

2. Благодаря сатире и юмору у юного читателя формируется определенное мнение о порочащих человека чертах характера.

Порой слово, сказанное с юмором, является более действенным, чем слово, отображающее недостатки человека (разумеется, не физические), что, в итоге, формирует у молодого читателя критическое мышление.

В данном контексте важно, какими художественными средствами детский писатель представляет отрицательные стороны характеров персонажей, высмеивает ли, скажем, лень, чревоугодие, трусость, лживость и

другие человеческие пороки или привлекает к ним внимание читателя без обращения к стилистике скучных советов и наставлений.

5. Примечательно, что поэты новейшего периода, продолжая традиции классиков армянской детской литературы Г.Агаяна, О.Туманяна и др., обязательно учитывают возрастные и психологические особенности читателя, не подсказывают, что и как делать или не делать, а дружески беседуют с ребенком о разном, отвечают на его многочисленные «почему» и «как».

Следует отметить, что детские писатели учитывают также и традицию мировой литературы, в которой юмор, как правило, бывает добрым в отличие от сатиры, острой и даже едкой по характеру и художественным средствам выражения.

Говоря о роли юмора и сатиры в детской литературе следует учесть, что основная функция юмористических и сатирических образов, картин и эпизодов заключается в воспитании нравственности у юного, формирующегося читателя.

Таким образом, сатира и юмор способствуют тому, чтобы ребенок мог различать образцовое и порочное и иметь о них определенное мнение.

Meline Gilavyan, Theme and humor as important means of younger reader education - Undoubtedly , the main goal of children 's literature is to promote the education and the development of the younger generation knowledge. To achieve these goals, children's writers use various artistic means that help the formation of image and portrait characteristics of the characters. The young reader is very sensitive and a children's writer should take this into account and not give moral arguments, in order to do that, children's writers often turn to satire and humor, present pictures of funny incidents from life in such way that they do not cause laughter and sarcasm. in this context, satire and humor can act as important means of education.

This article discusses problems of the healing value of satire and humor, it is emphasized that humor has a greater impact on the child than frank teachings and information about kindness.The purpose of children's writers is often turning to satire humour.

Ուղարկվել է խմբագրություն 13.11.2022թ.
Գրախոսվել է 19 .11.2022թ.
Ստորագրվել է տպագրության 21.11.2022թ.